Ընդունվել է

«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի

Հոգաբարձուների խորհրդի 05.11.2024թ. թիվ 26 որոշմամբ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՓՈՔՐ ՀԱՅՑԱԳՆՈՎ ՎԵՃԵՐԻ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ 3
Հոդված 2. Արբիտրաժ իրականացնելու պահանջը և պատասխանը 4
Հոդված 3. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը 5
Հոդված 4. Վարույթը 5
Հոդված 5. Վճիռը 6
Հոդված 6. Արբիտրաժային ծախսերը 7

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային կանոնները (այսուհետ՝ Կանոններ) հաստատվել են «ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից և կիրառվում են Կենտրոնի կողմից վարվող արբիտրաժային վարույթների նկատմամբ, այն դեպքում, երբ

   1) վարույթը վերաբերում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիա ունեցող անձանց, էներգետիկայի (էլեկտրաէներգետիկայի, ջերմամատակարարման, գազամատակարարման), ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց և հաճախորդների միջև կնքված պայմանագրերից բխող գումարի բռնագանձման պահանջին, ու հայցապահանջի չափը չի գերազանցում հինգ միլիոն ՀՀ դրամը, և

   2) վեճն արբիտրաժի միջոցով լուծելու արբիտրաժային վերապահումը ներառված է կողմերի միջև կնքված պայմանագրերում, կամ,

   3) արբիտրաժային համաձայնությունը կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ, կամ

   4) կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ վեճի լուծումը վերապահվել է Կենտրոնին:

1.1. Սույն կանոնները կիրառվում են նաև քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից բխող և հինգ միլիոն ՀՀ դրամը չգերազանցող բռնագանձման պահանջներով գործերի նկատմամբ, եթե առկա է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կնքված արբիտրաժային համաձայնություն, և գործի բնույթը թույլ է տալիս այն քննել սույն Կանոններով:

(լրացվել է Հոգաբարձուների խորհրդի 17.12.2025 թվականի թիվ 40 որոշմամբ)

2. Սույն կանոններով նշված չափանիշներին բավարարող գործը քննվում է փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային կանոններով, եթե կողմը, ով նախաձեռնել

է արբիտրաժային վարույթը, չի դիմել ընդհանուր կանոններով վարույթի իրականացման համար:

3. Սույն կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են Կենտրոնի Արբիտրաժային կանոններով նախատեսված ընդհանուր դրույթներով այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն կանոններին:

Հոդված 2. Արբիտրաժ իրականացնելու պահանջը և պատասխանը

1. Արբիտրաժ իրականացնելու պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

   (1) հայցվորի անունը (անվանումը), անձը հաստատող տվյալները, եթե ֆիզիկական անձ է, պետական գրանցման տվյալները, եթե իրավաբանական անձ է, հայցվորի կոնտակտային տվյալները՝ հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և ծանուցման նախընտրելի միջոցը,

   (2) հայցվորի ներկայացուցչի անունը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն կամ այլ կոնտակտային տվյալներ,

   (3) պատասխանողի անունը (անվանումը), ֆիզիկական հասցեն և այլ կոնտակտային տվյալներ, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեն, եթե դրանք հասանելի են հայցվորին,

   (4) վեճի փաստերի և բնույթի նկարագրությունը,

   (5) ներկայացվող պահանջը՝ ներառյալ պահանջվող գումարի չափը,

   (6) արբիտրաժային համաձայնություն(ներ):

2. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային վարույթում Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխան ներկայացնելու ժամկետը պահանջը ստանալու պահից տասը օր է: Այն պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

   (1) պատասխանողի անունը (անվանումը), պատասխանողի անձը հաստատող տվյալները, եթե ֆիզիկական անձ է, պատասխանողի պետական գրանցման տվյալները, եթե իրավաբանական անձ է, և պատասխանողի կոնտակտային տվյալները, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և ծանուցման նախընտրելի միջոցը,

   (2) պատասխանողի ներկայացուցչի անունը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն կամ այլ կոնտակտային տվյալներ,

(3) փաստարկներ կապված հայցվորի պահանջների հիմքում ընկած փաստերի և վեճի բնույթի վերաբերյալ,
(4) ներկայացված (հայցա)պահանջի վերաբերյալ պատասխանը:

3. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո չի թույլատրվում իրականացնել հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կամ հայցի լրացում, ինչպես նաև ներկայացնել հակընդդեմ հայց, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային տրիբունալը, հաշվի առնելով գործի բնույթը և այլ հանգամանքներ, թույլատրում է դրանց ներկայացումը:

Հոդված 3. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը

1. Սույն կանոնների կիրառման դեպքում արբիտրաժային տրիբունալը պետք է կազմված լինի միանձնյա արբիտրից՝ անկախ արբիտրաժային համաձայնությունում դրան հակասող դրույթներից:
2. Կողմերը Կենտրոնի Քարտուղարության կողմից սահմանված ժամկետում, որպես կանոն հինգ օրվա ընթացքում, կարող են համատեղ առաջադրել միանձնյա արբիտրի թեկնածությունը: Նման առաջադրման բացակայության դեպքում միանձնյա արբիտրը նշանակվում է Գլխավոր քարտուղարի կողմից:
3. Գլխավոր քարտուղարը, հաստատում կամ նշանակում է արբիտրին՝ Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխանը ստանալուց հետո կամ դրա համար նախատեսված ժամկետի ավարտից հետո հինգ օրվա ընթացքում:
4. Նախքան նշանակումը կամ հաստատումը, ապագա արբիտրը պետք է ստորագրի ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարություն: Հավանական արբիտրը պետք է Քարտուղարությանը գրավոր կերպով հայտնի այն բոլոր փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կողմերի տեսանկյունից կարող են կասկածի տակ դնել արբիտրի անկախությունը, ինչպես նաև ցանկացած հանգամանքի մասին, որը ողջամիտ կասկած կարող է առաջացնել արբիտրի անկողմնակալության վերաբերյալ:

Հոդված 4. Վարույթը

1. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային վարույթն իրականացվում է գրավոր ընթացակարգով՝ առանց լսումների՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում:
2. Տրիբունալը կարող է լսումներ անցկացնել, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ:
3. Եթե անհրաժեշտ է պարզել կողմերի կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր կամ առկա է կողմերին, վկաներին, փորձագետին կամ մասնագետին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույց պահանջելու անհրաժեշտություն, ապա տրիբունալը կարող է անցում կատարել Արբիտրաժային կանոններով նախատեսված ընդհանուր կարգով գործի քննության, եթե համապատասխան արբիտրաժային ծախսերը վճարվում են կողմերի կողմից, հակառակ դեպքում տրիբունալը կարող է ավարտել արբիտրաժային վարույթը:
4. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժի վայրը Երևանն (Հայաստան) է, իսկ արբիտրաժի լեզուն՝ հայերենը:
5. Վեճի նկատմամբ կիրառվող իրավունքը ՀՀ իրավունքն է:
6. Կանոնների հիման վրա հաղորդակցությունը, որպես կանոն, իրականացվում է էլեկտրոնային եղանակով, անհնարինության դեպքում՝ հաղորդակցությունը կարող է իրականացվել առաքման միջոցով՝ անդորրագրի, պատվիրված նամակի, սուրհանդակի կամ հեռահաղորդակցության ցանկացած այլ միջոցով, որն ապահովում է դրանց ուղարկման հավաստումը:

Հոդված 5. Վճիռը

1. Արբիտրաժային տրիբունալի ձևավորման պահից 15 օրվա ընթացքում տրիբունալը պետք է վերջնական վճիռ կայացնի: Տրիբունալը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգել նշված ժամկետը ևս 15 օրով՝ այդ մասին տեղեկացնելով Քարտուղարությանը:
2. Կանոնների 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում արբիտրաժային վճիռը կայացվում է տրիբունալի ձևավորման պահից երկու ամսվա ընթացքում:
3. Վճիռը ստորագրվում է արբիտրի կողմից: Այն պետք է լինի գրավոր և պատճառաբանված:
4. Արբիտրաժային տրիբունալի կողմից ստորագրված վճիռը Կենտրոնի Քարտուղարությունը հնարավորինս սեղմ ժամկետում ուղարկում է կողմերին:

5. Վճռի հարկադիր կատարման համար Կենտրոնին կարող է ներկայացվել դիմում, որի բավարարման դեպքում Կենտրոնը օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

Հոդված 6. Արբիտրաժային ծախսերը

1. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային ծախսերի համար վճարումն իրականացվում է մեկ միասնական վճարման ձևով՝ Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացման հետ միաժամանակ:
2. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային միասնական վճարը վճարվում է հայցագնի 1,5 տոկոսի չափով, սակայն ոչ պակաս, քան 9000 ՀՀ դրամը:
3. Սույն հոդվածով սահմանված արբիտրաժային ծախսերը ներառում են հարկերը և օրենքով սահմանված պարտադիր վճարները:
4. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային գործերով արբիտրների վարձատրության հետ կապված հարցերը կարգավորվում են Կենտրոնի և արբիտրի միջև կնքված պայմանագրով:
5. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային գործերով արբիտրին նշանակելուց հետո հայցից հրաժարման դեպքում արբիտրաժային ծախսը ենթակա չէ վերադարձման, իսկ մինչև արբիտրի նշանակումը հրաժարվելու դեպքում 50%-ը կարող է վերադարձվել:
6. Փոքր հայցագնով վեճերի արբիտրաժային ծախսերի բաշխման և հատուցման հարցը լուծվում է արբիտրաժային վճռով: Անձը, ում դեմ կայացվել է արբիտրաժային վճիռը կրում է արբիտրաժային ծախսերի հատուցման պարտականությունը: